նութեան դիրքը, հասկանալի պատճառով, գիծ չէ: Մինչ՝ մեր գրացիք չունին արտաքին վտանգի մտահոգութիւն, ընդհակառակը ձեռնտուութիւն այդ կողմից, մենք նման խնդիրներին մօտենում ենք առաւելապէս արտաքին վտանգի մտահոգութիւններով ծանրաբեռնուած, թէեւ մեզ վրացիներից ու թաթարներից անջատող ուրիշ նկատումներ եւս կան:

Վերջիններս ձգտում են «Կովկասի Միութեան» մէջ առնել նաեւ Հիւսիսային Կովկասի լեռնականներին, մի բան, որ Հայաստանի հաշուին դալ չէ կարող: Ապա, վրացիք եւ թաթարները իրենց նպատակին հասնիլ ձգտում են՝ յենուած արտաքին ուժերի վրայ եւ նրանց աջակցութեամբ: Թէեւ իրենց ղեկավարները, գոնէ վրացիք, բացէ ի բաց ժխտում են նման վերագրումն, այդ համարելով կատարեալ զրպարտութիւն, բայց եւ այնպէս աւելի քան հաւանական է օտար սադրանքների պարագան:

Այս վերջինների թւում են եւ կամ առհասարակ լինել կարող են՝ Տաճկաստանը եւ Լեհաստանը: Սակայն առանց Անգլիայի — թէեւ անտեսանելի — թելադրութեան եւ ծրագիրների, այլ եւ առանց նրա գործօն ձեռնտուութեան՝ անյաջողութեան է դատապարտուած ամէն մի նման ծրագիր:

Օտար ուժերի միջամտութիւնը Կովկասի գործերում՝ բացարձակապէս ժխտելի է հայ ազգային քաղաքականութեան համար, որչափ եւ նա հակաբոլշեւիկ, անգամ հակառուս լինի: Եւ այդ՝ ոչ միայն Տաճկաստանի, որպէս արտաքին ուժի, այլ եւ առհասարակ բոլոր շահագրգռուած պետութիւնների հանդէպ: Հին տէրը նորով փոխելու գաղափարը, լինի նա մինչեւ իսկ ամենէն «քաղաքակրթուածը, խոսամնայիցը եւ դեմոկրատականը», մեզ համար ժխտելի է եւ յառաջուն է՛, առանց նրա դէմքն իսկ տեսնելու եւ նրա ծրագիրը քննելու:

Տեսնում ենք ուրեմն՝ այստեղ էլ հայ քաղաքական շրջանակներն են, բոլշեւիկ թէ հակաբոլշեւիկ, որ մտածողութեան ընդհանուր կողմեր են յայտնաբերում: Հայ բոլշեւիկները թէեւ շարունակ«Դաշնակներին» երեւակայական, հակախորհրդային դաւերի մէջ են մեղադրում, բայց ի հարկէ իրենք էլ չեն հաւատում իրենց ասածներին ու գրածներին: Եւ սակայն, մինչ նրանց քաղաքականութեան ելակէտը համայնավարութեան եւ Խորհրդային կարգերի շահերն են — այլապէս նրանք պատրաստ են ամէն մի ուրիշ Ռուսաստանի դաւելու ու դաւադրելու, հայ ազգային քաղաքականութեան միակ եւ համայնապարփակ ղեկավար սկզբունքն է, ընդհակառակը, հայ ժողովուրդի գերագոյն շահը, Հայաստանի ապահովութիւնը եւ նրա բարգաւաճումը — լինի նա Խորհրդային թէ այլ վարչակարգի տակ: Բոլշեւիկների համար Հայաստանը Հայաստա՛ն է, որ չափ առեն որ նա Խորհրդային է, իսկ մեզ համար նա Հայաստան, եթէ նա մինչեւ իսկ Խորհրդային է: Նրանց «ռուսական օրիենտացիան» բոլշեւիզմով է սկսում եւ վերջանում, իսկ մեր «ռուսական օրիենտացիա»յի սկիզբը եւ վախճանը Հայաստանի՛ գերագոյն շահի գիտակցութիւնն է: Եթէ մի օր նոյն այդ շահը հակառակը թելադրէ, հայ ազգային քաղաքականութիւնը ո՛չ միայն Խորհրդային կամ ցարական, այլ եւ առհասարակ ամէն կարգի եւ անուան Ռուսաստանի դէմ պիտի ծառանայ: Այդպիսի մօմէնտներ եղել են, նրանք նորէն վերադառնալ կարող են: Ահա ա՛յդ մոմենտն է նաեւ, որ երբեք մոռացութեան պէտք չէ տալ:

Այնպէս որ, վերջին հաշուով, պարապ խնդիր է ռուսական կամ հակառուս քաղաքական հակման եւ կամ առհասարակ «օրիենտացիայի» խնդիրը: Ինչպէս ուրիշ առթիւ ասել եմ՝ ամէն մի քաղաք· հակում արեւածագիկի հակմանը հաւասար արժէք ունի· նայած թէ քո երկրի, քո ժողովուրդի համար ո՛ր կողմից է աւելի օգուտ սպասուում:

Ժողովուրդները եւ հայրենիքները յաւիտենական արժէքներ են եւ ինքնանպատակ մեծութիւններ, ուստի եւ վէմ ժայռի նման հաստատուն պիտի լինի հաւատքը դէպի այդ մեծութիւնները, մինչ օրիենտացիա ասածդ քամու պէս փոփոխուիլ կարող է, նայած թէ ի՛նչ կերպ հնարաւոր է ազգի գերագոյն շահը պաշտպանել: Որով՝ ամէն մի ազգ իր իսկ մէջ որոնելու է բոլոր տեսակի «օրիենտացիաների» սկիզբը եւ վերջը: